

<<ՀԱՅԲԻԶՆԵՄԲԱՆԿ>> ՓԲԸ հայտարարում է մրցույթ՝ Ռիսկերի կառավարման և հսկողության դեպարտամենտի Ներքին հսկողության վարչության Համապատասխանության ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ներգրավման համար

Աշխատատեղի անվանումը՝ Համապատասխանության ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Աշխատանքային պարտականություններ

- Բանկում առկա և ներդրվող բիզնես գործընթացների ուսումնասիրում և համապատասխանության ապահովման ռիսկի բացահայտում, վերլուծում, գնահատում, վերահսկում և մոնիթորինգի իրականացում
- Համապատասխանության ռիսկի գնահատման նոր մեթոդաբանության, սկզբունքների մշակում և առաջարկների ներկայացում
- Համապատասխանության ապահովման ռիսկի զսպման, կանխարգելման և նվազեցման ուղղություններով համապատասխան առաջարկությունների ներկայացում
- Իրավական համակարգի հնարավոր փոփոխությունների ազդեցության և դրա հետ կապված հնարավոր ռիսկերի գնահատում
- Ծրագրային և մեթոդաբանական ուսումնասիրությունների իրականացում
- Անհամապատասխանությունների բազայի վարում և հավաքագրված տեղեկատվության վերլուծում, հանձնարարականների հասցեագրում և դրանց համար սահմանված կատարողական ժամկետների հսկում անհամապատասխանության արձանագրումից մինչև անհամապատասխանության վերացման փաստի արձանագրումը
- Հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարների կազմակերպում Բանկի աշխատողների համար

Պահանջվող կրթություն և հմտություններ

- Բարձրագույն կրթություն ֆինանսների, տնտեսագիտության, իրավաբանական կամ այլ համապատասխան ոլորտում
- Բանկային համակարգում աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ, նախապատվությունը տրվում է մեթոդաբանության, իրավաբանական, աուդիտի և վերլուծության բնագավառին
- ՀՀ օրենսդրության, բանկային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի լավ իմացություն

- Հաղորդակցվելու հմտություն, թիմային մտածողություն, համագործակցելու ունակություն
- Ժամանակի կառավարման հմտություններ
- Աշխատանքը կոորդինացնելու հմտություններ
- ՀԾ-Բանկ 4.0 համակարգի իմացությունը կոդիտի որպես առավելություն
- Հայերենի գերազանց իմացություն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 09.02.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Chief Specialist for Compliance Unit – Name, Surname":

Մրցույթի անցկացման վայրը՝ "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ Գլխավոր գրասենյակ, ք. Երևան, Նալբանդյան 48: